

«ԴԱՍՏԱԿԵՐՏ ԿԱՅՍԵՐԱՑ»-Ը՝ ՖԱՆՏԱՍՄԱԳՈՐԻԱ

Պատմ. գիտ. դոկտոր Ն. Մ. ԲԱՐԹԻԿՅԱՆ

Ակադեմիկոս Ս. Տ. Երեմյանի առաջ քաշած վարկածը, թե Մեծ Հայքի միասնական թագավորությունը Հռոմեական կայսրության և Սասանյան իրանի միջև նախքան 387 թ. բաժանվելը բաժանված է եղել մի անգամ ևս՝ 244 թ., քննադատության ենթարկվեց բանասիրական գիտությունների դոկտոր Ա. Ա. Մարտիրոսյանի վերջերս լույս տեսած կարևոր հոդվածում¹։ Այստեղ մենք նպատակ չունենք մեկ անգամ ևս քննության ենթարկելու այդ խնդիրը, բայց անհրաժեշտ ենք գտնում անդրադառնալ Ս. Երեմյանի այդ վարկածի «հիմք» հանդիսացած տվյալի վրա։ Այն հանդիպում է Ագաթանգեղոսի «Պատմութիւն հայոց»-ի մեջ և վերաբերում է Տրդատ III թագավորի հրովարտակին՝ ուղղված հայոց ավագանուն և ժողովրդին։ Ագաթանգեղոսը գրում է. «Եւ յետ այսորիկ հրաման ետ Տրդատ արքայ՝ հրովարտակ առնել ընդ ամենայն աշխարհիս իշխանութեան իւրոյ»։ Հրովարտակում ասված է. «Տրդատ արքայ Հայոց մեծաց», առ մեծամեծս և առ իշխանս և առ նախարարս և առ գործակալս և առ այլ մարդիկդ. որ ընդ իմով իշխանութեամբ էք, յաւանս, ի շէնս, ի գեօղս, յագարակս, առ աղատս և առ շինականս, միանգամայն՝ իսկ ամենեւեան. ողջոյն։

Ողջոյն հասնալ ի շինութիւն դիցն օգնականութեամբ, լիութիւն պարարտութեան յարոյն Արամազդայ, խնամակալութիւն յԱնահիտ տիկնոջէ, և քաջութիւն հասցէ ձեզ ի քաջէն Վահագնէ ամենայն Հայոց աշխարհիս. իմաստութիւն Յունաց հասցէ դաստակերտիդ կայսերաց, և ի մեր դիցախառն Պարթևաց հասցէ այցելութիւն, ի փառաց թագաւորաց և ի քաջ նախնեաց»²։

Ահա, վերոբերյալ նախադասության «դաստակերտիդ կայսերաց» բառերը հիմք են հանդիսացել նրանց տակ Հայաստանի՝ Հռոմեական կայսրության ենթակա տարածք տեսնելու, հետևաբար և երկու Հայաստանի գոյություն և, ավելի հեռուն գնալով, «հիմնավորելու» այն միտքը, թե Տրդատ III-ի շուրջ Հայաստանն արդեն բաժանված է եղել Հռոմեական կայսրության և իրանի միջև, ընդ որում Տրդատը թագավորում էր Հայաստանի հռոմեական կեսում։ Իր եզրակացությունը Ս. Տ. Երեմյանն այնքան անվիճելի է համարում, որ նրա պատակահարմար է գտնում «Հայ ժողովրդի պատմության» երկրորդ հատորի համապատասխան գլուխը վերնագրել. «Մեծ Հայքի հռոմեական մասը՝ Արաս-

1 Ա. Ա. Մարտիրոսյան. III գարում Մեծ Հայքի բաժանման վարկածը. — «Պատմա-բանասիրական հանդես», 1987, № 3, էջ 201—212։

2 Ուղղելի՝ Մեծաց։

3 Ագաթանգեղայ Պատմութիւն հայոց, աշխատութեամբ Գ. Տեր-Մկրտչեան և Ստ. Կա-նայեանց. Տփղիս. 1909, էջ 73։ Ագաթանգեղոսի «Պատմութիւնը» հունարեն թարգմանողը՝ վրոբերյալ նախադասության վերջին հատվածը դանց է առել։ Նա թարգմանել է միևնույն ժամանակ. «...ի քաջէն Վահագնէ ամենայն Հայոց աշխարհիս» նախադասությունը՝ Այսպիս.

«Προσποια γέννηται ἡ πὸ τοῦ τῶν βασιλῶν διοικήσεως καὶ πολιτισμοῦ ἐποικισίας ἡ πὸ τοῦ ὑποδουλοῦντος Διότ. φροντίς δε ἡ πὸ τοῦ δεσποίνης Ἀρταξιδούς, καὶ ἀρετῇ ὅμιν φθιῖται ἡ πὸ τοῦ ἐναρτέου Ἐφραξιδούς, πᾶσι τῇ γῆνι καὶ τῇ ἀλυσίᾳ» (Guy Lafontaine. La version grecque ancienne du livre arménien d'Agathange. — Publications de l'Institut Orientaliste de Louvain 7, Louvain-la-Neuve, 1973, p. 223). Շարունակության տեղում գրել է «և այլն»։ Հավանաբար ցանկացել է ասել, որ Տրդատը հայերին այլ բարիքներ էլ չ'մաղթում, որոնք, ճախորդների նման, արվելու են համապատասխան անձնավորությունների կողմից։ Հունարենը չունի և շարունակությունը՝ հայերենի 128—131 պարբերությունները։

տակերտ կայսերաց⁴, և ապա շարադրանքում գրել, թե Քանի որ Հայաստանի Հոռմին անցած մասը կայսրության համակարգի մեջ էր, ուստի Ազաթան-վեղոսը այն համարում է ռասստակերտ կայսերաց⁵:

Բայց այդպե՞ս է արդյոք...

Ավելորդ չէ այստեղ նշել, որ ռասստակերտ կայսերաց դարձվածքը հայ մատենագրության մեջ հանդիպում է մեկ անգամ, Ազաթանգեղոսի հիշյալ հատվածում: Այլ աղբյուրներում այն վկայված չէ: Այդպիսի գիտության մեջ ընդունված է կոչել ἀπαξ λεγόμενον (hapax legomenon) «մեկ անգամ ասված» (վկայված, հիշված): Ուսումնասիրողները նման hapax legomenon-ներին վերապահություններ են մոտենում, ենթադրում հնարավոր աղավաղում:

Հարց է ծագում՝ նախ. եթե Տրդատը Հայաստանի «հոռմեական կեսի» թագավոր է, ապա նա որպես ո՞վ է դիմում «առ ազատս և առ շինականս» «ամենայն Հայոց աշխարհիս»: Մի՞թե «կայսերաց դաստակերտը» (ըստ Մ. Երեմյանի՝ «Հայաստանի հոռմեական մասը») նա համարում է ամբողջ Հայաստանը:

Երկրորդ. Հոռմեական կայսրության («Յունաց թագաւորութեան», ինչպես այն կոչվում է V դարի հայկական աղբյուրներում) շինության հսգսնորով մտահոգված են «Յունաց թագաւորները»: Այդ մասին պարզ ասում է Տրդատը. «Յորժամ էաք ի Յունաց աշխարհին՝ անդ տեսանէաք զհոգատարութիւն թագաւորացն, ի հոգալ ընդ շինութիւն իւրեանց աշխարհին»⁶: Այդ «իւրեանց աշխարհի» մեջ «Հայաստանի հոռմեական կեսը»՝ «կայսերաց դաստակերտը» չէ՞ր ընդգրկվում, որ Տրդատը պիտի մտահոգվեր դրա մասին: Մի՞թե կայսրերը իրենց դաստակերտը սեփական երկիր չէին համարում:

Երրորդ. ինչպե՞ս կարող են «Յունյն կայսրերը» «Յունաց իմաստութիւնը» տարածել կայսրության տարածքով մեկ, դրանից զրկելով «կայսերաց դաստակերտը»: Ինչո՞ւ Տրդատը պիտի մաղթեր, որ «Յունաց իմաստութիւնը» տարածվի նաև «Հոռմեական կեսի Հայաստանի» վրա: Դա ինքնըստինքյան հասկանալի չէ՞:

Այսպիսով, հրովարտակից պարզ երևում է, որ Տրդատը միասնական հայկական թագավորության գլխին է կանգնած, և ոչ «Մեծ Հայքի» կարծեցյալ «հոռմեական կեսի»: Ավելորդ չէ այստեղ այդ միտքը հաստատող մի փաստ ևս բերել: Նույն Տրդատ արքան գրում է. «Զի որպէս ամենայն տանուտէր ընդ տան իւրու և ընդ ընտանեաց հոգայ՝ սոյնպէս և մեք հոգամք ընդ մեք Հայոց աշխարհիս շինութեան»⁷:

Ազաթանգեղոսի երկում պահպանված Տրդատի հրովարտակում խնդրո առարկա նախադասությունը բաղկացած է հայոց թագավորի մի շարք «մաղթանքներից», որոնցից յուրաքանչյուրի կյանքի կոչողները մեկ առ մեկ թրվարկված են: Այսպես.

Տրդատի մաղթանք

Մաղթանքի կյանքի կոչողը

1. շինութիւն	դիցն օգնականութիւն
2. լիութիւն	արին Արամազդ
3. խնամակալութիւն	Անահիտ տիկին
4. քաջութիւն	քաջն Վահագն
5. իմաստութիւն	?
6. այցելութիւն	դիցախառն Պարթևք, փառք թագաւորաց և րաջ նախնիք

Ինչպես տեսնում ենք, միայն «Յունաց իմաստութիւն»-ը տվողը չկա: Այստեղ անհրաժեշտ է շեշտել, որ «դաստակերտ»-ի տակ հասկացվում է հա-

⁴ Հայ ժողովրդի պատմություն. հ. Բ, Երևան, 1984, էջ 41:

⁵ Նույն տեղում, էջ 43:

⁶ Ազաթանգեղոս, էջ 74:

⁷ Նույն տեղում, էջ 75:

մայն Հայաստանը, և ոչ «հռոմեական» Հայաստանը: Տրդատի հրովարտականում դա միանգամայն ակնբախ է: Ամենայն հայոց աշխարհիս» դարձվածքը կրկնելու համար Տրդատը օգտագործում է «դաստակերտ» բառը: Դա կարելի է հաստատել Նդիշի երկում պահպանված 450 թ. Թեոդոս II կայսեր ուղղված հայոց դիմումով. «Եւ յայնչափ մեծ իշխանութեան՝ դաստակերտ մեծ և սիրելի զՀայոց աշխարհ անուանէին»⁸: Կարող են առարկել, չէ՞ որ Ագաթանգեղոսի երկում պարզ գրված է. «դաստակերտ կայսերաց», ապա ի՞նչ «Հայոց աշխարհի» մասին կարող է խոսք լինել:

Ո՞րն է առեղծվածը:

Տրդատ III-ի հրովարտականում «մաղթանքները» իրականացնողները բերված են բացառական հոլովում՝ «ի արոյն (յարոյն) Արամազդայ, ի Անահիտ (յԱնահիտ) տիկնոջէ, ի քաջէն Վահագնէ, ... ի Պարթևաց, ի փառաց Թագաւորաց, ի քաջ նախնեաց»: Միակ տեղը, որտեղից գրչի մեղքով ընկել է բացառականի այդ «ի» նախդիրը. վերաբերում է «Յունաց իմաստութեան»: Հենց դա էլ պատճառ է դարձել Ագաթանգեղոսի տվյալ հատվածի սխալ մեկնաբանության: Այն պիտի ուղղել հետևյալ կերպ. «Իմաստութիւն Յունաց հասցէ դաստակերտիդ ի կայսերաց»:

Մեր ուղղման տրամաբանական լինելը հաստատվում է և այն հանգամանքով, որ իր երկրի շինության մասին մտահոգված Տրդատը, բացի սեփական աստվածների միջնորդությունից, այն ակնկալում է նաև իր արեւելյան և արեւմտյան հարևաններից: Արեւելյաններից նա ակնկալում է փառքը Պարթև Թագավորների, որոնցից սերում է և ինքը, իսկ արեւմտականներից՝ Հունաց իմաստությունը, այն է՝ հունական մշակույթը, գիտությունը և այլն: Այդ մասին գրում է Ղազար Փարպեցին. «Եւ յայնմհետէ վտակք գիտութեան, որպէս ի Թագաւորանիստ վայրի, յորդեալ բղխեն ի քաղաքէն»⁹, «եւ մինչեւ ցայսօր առաւելաւ տարածին յամենայն կողմանս նորա իմաստաւորեան վտակք»¹⁰:

Ամենորդ չէ այստեղ նշել, որ V դարի հայ մատենագրության համար հռոմեական կայսրերը «Յունաց կայսրեր» (Թագաւորներ) էին: Ագաթանգեղոսը հռոմեական կայսեր անվանում է «Թագաւորն Յունաց»¹¹, Փավստոս Բուզանդը գրում է՝ «զայս ամենայն լսէր Թագաւորն Յունաց»¹², «Թագաւորն Յունաց Վաղէս», մի այլ տեղում՝ «կայսրն Վաղէս»¹³, Նդիշեն՝ «հրովարտակ մի առ Թագաւորն Յունաց»¹⁴ (իմա՝ Թեոդոս II), «երանելին Թէոդոս կայսր»¹⁵, «եւ Թագաւորէ փոխանակ նորա Մարկիանոս կայսր»¹⁶: Նույնը հանդիպում է Մովսէս Խորենացու «Պատմության» մեջ. «Յունաց Թագաւորեաց Պոլոքոս»¹⁷, «Թագաւորեաց Յունաց ամբարիշտն Յուլիանոս»¹⁸, «եւ Յունաց Թագաւորեալ Վաղերիանոս»¹⁹, «կայսերն Յունաց Թէոդոսիւ»²⁰, ինչպէս և

Նդիշի վասն Վարդանայ և հայոց պատերազմին, աշխատութեամբ Ի. Տէր-Մինասեանի. Երեւան, 1957, էջ 72:

⁹ Ղազարայ Փարպեցույ Պատմութիւն Հայոց, տշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան և Սա. Մալխասեան. Տիգրիս, 1904, էջ 12: Ղազար Փարպեցին նկատի ունի Կոստանդնուպոլիս քաղաքը. որ Տրդատի հրովարտակի հրապարակման ժամանակ, հասկանալի է, գոյություն չուներ: Բայց Տրդատը նկատի ունի ոչ թե կոնկրետ քաղաք, այլ «Յունաց կայսրութիւն»-ը:

¹⁰ Նույն տեղում:

¹¹ Ագաթանգեղոս, էջ 26, 31, 75:

¹² Փավստոսի Բուզանդացու Պատմութիւն Հայոց, ի լոյս ած Բ. Պ. ՍՊր., 1883, էջ 47:

¹³ Նույն տեղում, էջ 49:

¹⁴ Նդիշի, էջ 132:

¹⁵ Նույն տեղում, էջ 7:

¹⁶ Նույն տեղում, էջ 73:

¹⁷ Մովսէս Խորենացի, էջ 215:

¹⁸ Նույն տեղում, էջ 270:

¹⁹ Նույն տեղում, էջ 277:

²⁰ Նույն տեղում, էջ 347:

հազար Փարպեցու երկում. «Առաքելն պատգամաւորս... առ թագաւորն Յունաց լեւոն»²¹: Մի այլ տեղում Փարպեցին «Յունաց թագաւորին» անվանում է «կայսր»²²:

Արդ, Ագաթանգեղոսի՝ սույն հոդվածի նույն ծառայած նախադասութեան մեջ «կայսերաց» բառը նկատի չունի կոնկրետ անձնավորութիւնների, այլ Հռոմեական (հունական) կայսրութիւնը, ասել է՝ հայոց թագավորը հույների «իմաստութիւնը» ակնկալում է Հռոմեական (հունական) կայսրութիւնից:

Մեր ուղղումը ոչ միայն հաստատում է Ա. Ա. Մարտիրոսյանի եզրակացութիւնների հիմնավոր լինելը, այլև վկայում է այն մասին, որ Արշակունյաց Հայաստանի համար սշակույթի, գիտութեան ազբյուր շարունակում էր մնալ հունական աշխարհը:

Մեկ «Ի»-ի անկումը ձեռագրում պատճառ դառնալ «Հայաստանի հռոմեական կեսի» առաջացման...

«ДАСТАКЕРТ ИМПЕРАТОРОВ»—ФАНТАСМАГОРИЯ

Доктор ист. наук Р. М. БАРТИКЯН

Резюме

В «Истории Армении» автора V века Агафангела сохранился текст указа Тиридата III, в котором, в частности, содержится мольба армянского царя—«дабы мудрость греков достигла дастакерта императоров» (*իմաստութիւն Յունաց հասցէ դաստակերտիք կայսերաց*). Акад. С. Т. Еремян на основании данного оборота пришел к выводу, что до раздела Армении между Римской империей и сасанидским Ираном в 387 г., она была разделена еще в 244 г., притом Тиридат III правил в «римской части Армении», которую Агафангел будто именовал «дастакертом императоров». На самом деле, в интересующем нас предложении по вине переписчика рукописи выпал предлог отложительного падежа «ի» (от, через), и данное предложение нужно восстановить следующим образом: *իմաստութիւն Յունաց հասցէ դաստակերտիք ի կայսերաց*—«дабы мудрость греков достигла дастакерта через императоров», т. е. от Римской империи, именуемой армянами «империей греков». В армянских источниках V века «дастакертом» называлась и Армения. Наше исправление еще раз подтверждает правоту тезиса А. А. Мартиросяна о том, что Тиридат III был царем всей Армении, а не «римской части Армении», и что до 387 г. никакого раздела Армении не было.

²¹ Ղ ա դ ա ր Փ ա ր պ ե ց ի, էջ 113:

²² Ն ու յ ն տ ե ղ ու մ, էջ 63: